Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ
ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

11 հոկտեմբերի 2022թ.

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2022

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնակարգով սահմանվում են «ԷՖՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ծառայողական տեղեկատվության հրապարակման, բացահայտման, պահպանման և տրամադրման կանոնները:

1.2. Ընկերության ծառայողական տեղեկատվության հրապարակման, պահպանման և տրամադրման ողջ գործընթացը կարգավորվում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի, դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերի:

1.3. Սույն Կանոնակարգի նպատակն է՝

1.3.1. ապահովել Ընկերության առկա և պոտենցիալ հաճախորդներին վերաբերող տեղեկատվության պատշաճ պահպանումը և տրամադրումը,

1.3.2. կանխել հնարավոր այն գործոնները, որոնք կարող են խափանել այդպիսի տեղեկատվության ապահովման և տրամադրման գործընթացը և վնաս պատճառել առկա և պոտենցիալ հաճախորդներին:

1.4. Սույն Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

Ծառայողական տեղեկատվություն/տեղեկություն. Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Ընկերությանը հայտնի դարձած Հաճախորդի՝ հաշիվների վերաբերյալ տեղեկություններ, Հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ Հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև Հաճախորդի առևտրային կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական դիզայնի մասին տեղեկություններ և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություններ, որոնք Հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և Ընկերությունը տեղյակ է եղել կամ պետք է տեղյակ լիներ այդ մտադրության մասին,

Հաճախորդ. անձ, որն օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ներդրումային և ոչ հիմնական ծառայություններից կամ դիմել է Ընկերությանը այդ ծառայություններից օգտվելու նպատակով,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

Ծառայողական տեղեկությունների տրամադրում. Օրենքով սահմանված դեպքերում և հիմքերով պետական մարմիններին, պաշտոնատար անձանց ու քաղաքացիներին այդ տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով հաղորդում:

1.5. Ընկերության նկատմամբ վերահսկողության իրականացման կապակցությամբ վերջինիս հաճախորդների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկին տրամադրված տեղեկությունը համարվում է ծառայողական տեղեկատվություն:

1.6. Սույն Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

2. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

2.1. Ծառայողական տեղեկատվության հրապարակում է համարվում այդ տեղեկությունը (կամ դրա ցանկացած կրիչը) բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը, երրորդ անձին հայտնի դարձնելը կամ տարածելը, երրորդ անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ընձեռելը (թույլատրելը, չխոչընդոտելը կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

2.2. Ծառայողական տեղեկատվության հրապարակումն այն անձի, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն Կանոնակարգով և Օրենքով սահմանված կարգով, արգելվում է (բացառությամբ սույն Կանոնակարգի 2.3. կետով նախատեսված դեպքերի): Ընկերությունը, վերջինիս ղեկավար անձինք և աշխատակիցները պարտավոր են մերժել ծառայողական տեղեկատվության տրամադրման ցանկացած միջնորդություն կամ պահանջ, եթե այն չի ներկայացվել սույն կանոնակարգի և ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան:

2.3. Ծառայողական տեղեկատվության հրապարակում չի համարվում և սույն Կանոնակարգի 2.2. կետի իմաստով չի արգելվում.

2.3.1. Ընկերությանն իրավաբանական, հաշվապահական, այլ խորհրդատվական կամ ներկայացուցչական ծառայություններ մատուցող կամ նրա համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց և կազմակերպություններին Ընկերության կողմից ծառայողական տեղեկություն հայտնելը կամ տրամադրելը, եթե դա անհրաժեշտ է այդ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար, և եթե այդ անձինք և կազմակերպությունները գրավոր պարտավորություն են տվել պահպանել տեղեկությունը և ձեռնպահ մնալ այն հրապարակելուց,

2.3.2. Հաճախորդի կողմից կամ վերջինիս գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ միայն իրեն վերաբերող տեղեկությունների հրապարակումը,

2.3.3. Ընկերության նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկին ծառայողական տեղեկությունների տրամադրումը,

2.3.4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ վարչական դավարության օրենսգրքի 31.7-րդ գլխի, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ծառայողական տեղեկատվության տրամադրումը,

2.3.5. օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում թողարկողին կամ Օրենքով սահմանված կարգով արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձին անվանական արժեթղթերի

սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում ներառված տեղեկությունների տրամադրումը,

2.3.6. Օրենքով և միջազգային պայմանագրով, համագործակցության պայմանագրով սահմանված կարգով ծառայողական տեղեկությունների տրամադրումն օտարերկրյա պետության իրավասու մարմիններին:

2.3.7. ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ քննչական կոմիտեին, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին և ՀՀ ոստիկանությանը Օրենքի Հոդված 98-ի 2-ի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկատվության տրամադրումը, ընդ որում տվյալ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Տեղեկությունները տրամադրում են տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգին հասանելիություն տալու միջոցով, իսկ այդ համակարգից տեղեկություններ ստանալու անհնարինության կամ համակարգ չմուտքագրված տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մարմնից ստացված հարցմանը գրավոր պատասխան ներկայացնելու միջոցով: Տեղեկությունները տրամադրվում են անվճար, բացառությամբ թղթային ձևով տրամադրված տեղեկությունների, որոնց համար հատուցման կարգը և չափը նախատեսվում են տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2.3.8. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկությունների տրամադրումը:

2.4. Ընկերությանը արգելվում է հաճախորդներին տեղեկացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշման և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմին տրամադրելու փաստի վերաբերյալ:

3. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

3.1. Ընկերության հաճախորդներին և վերջիններիս մատուցվող ծառայություններին առնչվող ծառայողական տեղեկատվության պատշաճ պահպանումն իրականացվում է Ընկերության ֆինանսական և տեխնիկական միջոցներով և համապատասխան աշխատակիցներին հասանելի եղանակով:

3.2. Ընկերությունը ծառայողական տեղեկությունները պահպանում է 3.3 և 3.4 կետերին համապատասխան:

3.3. Սույն Կանոնակարգի համաձայն Ընկերության ղեկավարներին, աշխատակիցներին, նախկինում ղեկավար կամ աշխատակից հանդիսացող անձանց, ինչպես նաև այն անձանց ու կազմակերպություններին, որոնք Ընկերությանը ծառայություններ (աշխատանքներ) են մատուցում կամ մատուցել են նախկինում, արգելվում է ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած ծառայողական տեղեկատվություն հրապարակելը, ինչպես նաև

իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

3.4. Ընկերությունը պարտավոր է տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են ծառայողական տեղեկությունները պատշաճ պահպանելու համար.

3.4.1. Ընկերության աշխատակիցների համակագիչների և այլ՝ որպես տեղեկատվական կրիչներ օգտագործվող տեխնիկական միջոցների շահագործումը կողմնակի անձանց կողմից պետք է բացառել: Համակարգիչները հասանելի պետք է լինեն միայն միացնելիս մուտքագրվող ծածկագրերի միջոցով: Նշված ծածկագիրը պետք է բաղկացած լինի առնվազն ութ նիշից, որի մեջ պետք է լինեն թվեր, լատինական այբուբենի տառեր (մեծատառ և փոքրատառ) և սիմվոլներ: Միաժամանակ արգելվում է ծածկագիրը պահել տեխնիկական միջոցի կամ համակարգչի հետ միասին:

4. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4.1. Այն անձը (բացառությամբ Ընկերության), որին ծառայողական տեղեկությունները վստահված են եղել կամ հայտնի են դարձել իր ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ, իրավունք չունի դրանք տրամադրելու այլ անձանց:

4.2. Ընկերության նկատմամբ վերահսկողության իրականացման կապակցությամբ վերջինիս Հաճախորդներին վերաբերող՝ ՀՀ Կենտրոնական բանկին հայտնի դարձած ծառայողական տեղեկատվության տրամադրումը կարող է իրականացվել միայն սույն Կանոնակարգին համապատասխան:

4.3. Ընկերությունը քաղաքացիական գործերով պահանջվող ծառայողական տեղեկատվությունը տրամադրում է միայն դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ընդունված որոշման հիման վրա, որի մեջ պետք է նշվեն նաև անձը և նրան վերաբերող այն տեղեկությունները, որոնք ենթակա են տրամադրման: Արգելվում է վերոնշյալ որոշման հիման վրա այդ որոշման մեջ չնշված այլ անձանց վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը:

4.4. Քրեական վարույթներով ծառայողական տեղեկատվության տրամադրումը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

4.5. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ծառայողական տեղեկությունները տրամադրվում են իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:

4.6. Ընկերության կողմից ծառայողական տեղեկատվության տրամադրումը Հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին) իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Ընթացակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում Ժողովի կողմից հաստատման պահից: